

2024 թ.



Աշխատաշուկայի կարիքների վերլուծություն. «Լրագրություն» ԿԾ

Որակի ապահովման բաժին

Բովանդակություն

Ներածություն	3
Հարցման արդյունքները	4
Եզրակացություններ	14
Առաջարկներ.....	15

Ներածություն

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Որակի ապահովման բաժինը, հետամուտ լինելով բուհի մատուցած կրթության որակի բարելավմանն ու աշխատաշուկայի համար մրցունակ կադրեր պատրաստելու քաղաքականությանը, իրականացրել է «Լրագրություն» (որակավորումը՝ «լրագրող») բակալավրի կրթական ծրագրի մասնագիտական աշխատաշուկայի կարիքների գնահատում:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրության նպատակն է թիրախավորել գործատուի ներկայիս պահանջները, բացահայտել աշխատաշուկայի զարգացումները, աջակցել մասնագիտական կրթական ծրագրի որակի և մրցունակության բարձրացմանը:

Մասնագիտական աշխատաշուկայի պահանջների ու գործատուի ներկայացրած առաջարկների վերլուծության արդյունքները կիրառվում են [ՄԿԾ շրջափուլային վերանայման գործընթացում](#)՝ նպաստելով կրթական ծրագրի շարունակական բարելավմանը:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հարցումը հասցեատերերին առաքելու համար ՀՖԿՍՊԻ Հանրային և ինստիտուցիոնալ կապերի բաժինը պաշտոնական գրություններ է ուղարկել ՀՀ գերատեսչություններ, հեռուստաընկերություններ, ռադիոներ, ակումբներ, ֆեդերացիաներ և ԶԼՄ-ներ՝ կցելով հարցաթերթի առցանց հղումը: Համապատասխան քանակի մասնակցություն ունենալու համար ՈԱ բաժինը ստեղծել է «Լրագրություն» կրթական ծրագրի պոտենցիալ աշխատաշուկայի տվյալների բազա՝ վերջիններիս հարցմանը ներգրավելով նաև հեռախոսագանգերի միջոցով:

Արդյունքում հնարավոր է եղել հարցումն ուղարկել ոլորտի 62 գործատուի, որոնց 61%-ը՝ 38 ներկայացուցիչ մասնակցել է հարցմանը:

Հարցաթերթը


Հարցաթերթը մշակվել է ՈԱԲ-ի կողմից մեդիաոլորտի տեղական և միջազգային աշխատաշուկաների կարիքների գնահատման համար նախատեսված հարցաթերթերի ուսումնասիրության արդյունքում: Հարցման մշակման ընթացքում հաշվի են առնվել նաև ոլորտի գործող մասնագետների կարծիքներն ու առաջարկները: Հարցաթերթը բաղկացած է 12 հիմնական և 2 ենթահարցերից: Որակական գնահատականներ ստանալու համար հարցաթերթում առկա է 2 բաց հարց:

Հարցման արդյունքները

Իրականացված հետազոտության շրջանակում հավաքագրվել է ՀՀ մեդիաոլորտի տարբեր ներկայացուցիչների կարծիքներ և առաջարկներ, այդ թվում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության սպորտի քաղաքականության վարչություն, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբ, Հայաստանի շախմատի ֆեդերացիա, Բարս Մեդիա, «Sport Mediamax» և այլն:

Հարց 2. Խնդրում ենք նշել Ձեր մեդիաոլորտը:


Գծապատկեր 1



Հարցման մասնակիցների մեծամասնությունը եղել է թվային մեդիայի ոլորտից, ռադիոյի և տպագիր մամուլի ոլորտի ներկայացուցիչները ցուցաբերել են անտարբերություն այս նախաձեռնությանը և գրեթե չեն մասնակցել հարցմանը:

Հարց 3. Ձեր կազմակերպության լրագրողներից (մեդիամասնագետներից) քանի՞սն ունեն բարձրագույն կրթություն:


Գծապատկեր 2



Հավաքագրված պատասխաններից երևում է, որ հարցմանը մասնակցած ՀՀ մեդիակազմակերպությունների 59%-ի բոլոր մեդիամասնագետներն ունեն բարձրագույն կրթություն, իսկ 29%-ից՝ գրեթե բոլորը: Հարցվածների մեջ չկար գեթ մեկ մեդիակազմակերպություն, որտեղ լրագրողներից ոչ մեկը չունենար բարձրագույն կրթություն:

Հարց 4. Որտե՞ղ են Ձեր մեդիամասնագետները ստացել մասնագիտական կրթություն:


Գծապատկեր 3¹



Ինչպես և ակնկալվում էր, մեդիաոլորտի մասնագետները հիմնականում (94%) իրենց կրթությունը ստացել են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Քիչ է այն կազմակերպությունների թիվը, որտեղ մասնագետները մասնագիտական կրթություն ձեռք են բերել միջազգային մեդիաընկերություններում (12%) կամ անհատական ուսուցման շնորհիվ (12%):

Հարց 5. Որքա՞ն է կազմում Ձեր ընկերության մեդիամասնագետի աշխատավարձը:

Գծապատկեր 4




¹ Հարցի համար հնարավոր է եղել պատասխանների մի քանի տարբերակ, այդ իսկ պատճառով տոկոսային համագումարը գերազանցում է 100%-ը:

Թեև հարցվածների մեծամասնությունը հրաժարվել է պատասխանել աշխատավարձի մասին հարցին, սակայն արդյունքում պարզվել է, որ հարցմանը մասնակցած ոլորտային կազմակերպություններում մեդիամասնագետի աշխատավարձը հիմնականում (29%) տատանվում է 151 հզր.–ից մինչև 200 հզր. դրամի սահմաններում:

Ամենացածր աշխատավարձը գրանցվել է ֆեդերացիաներում՝ 76 հզր.–ից մինչև 150 հզր. դրամ, իսկ ամենաբարձրը թվային մեդիայում՝ 201 հզր.–ից մինչև 300 հզր. դրամ:

6. Որքանո՞վ եք կարևորում կրթությունը լրագրող աշխատանքի ընդունելիս:

Գծապատկեր 5




Այս հարցի վերաբերյալ ամենակարևոր նախապայմանը եղել է բարձրագույն կրթության առկայությունը, մասնագիտական կրթության պահանջը, ըստ էության, առաջնային գործոնն չէ գործատուի համար: Կարելի է եզրակացնել, որ երբեմն աշխատանքի ընդունելիս մասնագիտական կրթությունը ստորադասվում է բարձրագույն կրթությանը, ինչի հետևանքով գործատուն աշխատանքի է վերցնում բարձրագույն կրթություն ունեցող, բայց ոչ մասնագիտական գիտելիքների և հմտությունների տիրապետող անձի, քանի որ աշխատաշուկայում բարձրագույն կրթության առկայությունը հիմնականում պահանջ է, իսկ մասնագիտական կրթության առկայությունը՝ ոչ:

Մեդիաոլորտի գործատուի համար մասնագիտական դասընթացներն ու վերապատրաստումները հիմնականում պարտադիր չեն, սակայն շատ ցանկալի են:

Հարց 7. Գնահատեք հետևյալ մասնագիտական գիտելիքների/հմտությունների կարևորությունը լրագրող աշխատանքի ընդունելիս, որտեղ 1-ը՝ անկարևոր, 5-ը՝ շատ կարևոր:

Գծապատկեր 6




Լրագրող աշխատանքի ընդունելիս գործատուի համար ամենակարևոր նախապայմանը մեդիագրագիտության կանոններին ու սկզբունքներին տիրապետելն է: Տեղեկատվության հավաքագրումը և վերլուծումը, փորձագետների որոնումն ու հարցազրույցների պատրաստումը, խմբագրական հմտությունները ևս գործատուի կողմից կարևորվող կոմպետենցիաներից են:

Հարցման մասնակիցները առաջնային չեն համարել լրագրողի մոնտաժային հմտությունները, որոնք ցանկալի են, սակայն չեն դիտարկվում լրագրողի մասնագիտական գործունեության պարտադիր և ուղիղ պահանջ:

Հարց 8. Գնահատեք հետևյալ ընդհանրական գիտելիքների/հմտությունների կարևորությունը լրագրող աշխատանքի ընդունելիս, որտեղ 1-ը՝ անկարևոր, 5-ը՝ շատ կարևոր:

Գծապատկեր 7



Ժամանակակից աշխատաշուկան, բացի մասնագիտական գիտելիքներից ու հմտություններից, սկսել է մեծ ուշադրություն դարձնել նաև ընդհանրական գիտելիքների ու հմտությունների վրա, այլ կերպ ասած՝ փափուկ հմտությունների («Soft skills») վրա: Սրա մասին են վկայում նաև սույն հարցման տվյալները, որտեղ եթե մասնագիտական հմտությունները կարևորող միավորները տարբեր են եղել՝ 3,4,5, ապա ընդհանրական հմտություններից և ոչ մեկը 4 միավորից պակաս չի գնահատվել:

Գործատուի համար ամենակարևոր փափուկ հմտություններից են նախաձեռնողականությունը և հաղորդակցման հմտությունները, ապա հաջորդաբար կարևորվել են արագ կողմնորոշվելու կարողություններն ու թիմում աշխատելու ունակությունը :

Համեմատաբար քիչ են կարևորվել *սթրեսակայունությունն* ու *բարձր «IQ»-ն*:

Հարց 9. Ըստ Ձեզ՝ էլ ի՞նչ հմտությունների պետք է տիրապետեն ժամանակակից մեդիամասնագետները աշխատաշուկայում ավելի մրցունակ լինելու համար:

Բացի վերոնշյալ հարցերում առկա պատասխաններից՝ հարցված գործատուն հաճախ կարևորել է կոնկրետ ուղղվածության մասնագիտացում ունենալը.


- Հայաստանյան մեդիայի այժմյան թերություններից է մեկ լրագրողի՝ բազմաթիվ ոլորտներ լուսաբանելու պրակտիկան: Ըստ իս՝ ընդհանուր առմամբ, գործող լրագրողները մակերեսային պատկերացում և գիտելիքներ ունեն ոլորտների ու թեմաների վերաբերյալ, որոնք լուսաբանում են: Հենց այս ուղղությամբ է պետք աշխատանք տանել՝ առավել մրցունակ դառնալու համար: Սա առաջին հերթին գործատուների/խմբագիրների խնդիրն է, որպեսզի, ասենք, իրավական ոլորտը լուսաբանողներին չուղղորդեն լուսաբանել, ասենք, առողջապահական ոլորտը:
- Տիրապետեն թվային գործիքների, մասնագիտացած լինեն կոնկրետ ոլորտում (իրավունք, տնտեսություն, սպորտ)

Այս հարցի շուրջ հավաքագրվել են նաև այլ որակական պատասխաններ, որոնք ներկայացնում ենք ստորև.

- Ցանկալի է ունենալ նաև որոշակի իրավական գիտելիքներ պետական գերատեսչությունների հասարակայնության հետ կապերի բաժիններում աշխատանքի համար, որպես քաղաքացիական ծառայող՝ պահպանել բարեվարքության սկզբունքները և տիրապետել նաև թվային տեխնոլոգիաներին:
- Խանդավառություն, տարբերվելու, համընդհանուր գաղջից խուսափելու, մրցունակ լինելու և սեփական ոճը ունենալու ձգտում:
- Հարցազրույցի մերժում ստանալուց հետո, փորձեն կրկին: Ունենան լրագրողական հոտառություն: Մշտապես զարգացնեն վերլուծական կարողությունները: Արագ կողմնորոշվեն թվային մեդիա դարում:
- Մեդիաբովանդակություն ստեղծելու կարողություն և հմտություն, կարողանալ գրել նաև ելույթներ, ուղերձներ, շնորհավորանքներ, գրություններ և այլն:

Հարց 10. Ձեր կազմակերպությունում եղե՞լ են կամ կա՞ն մեդիամասնագետներ, որոնք սովորել/ավարտել են ՀՖԿՍՊԻ-ն:


Գծապատկեր 8



Հարցված մեդիաաշխատողների գերակշիռ մասում չկան ու չեն եղել ՀՖԿՍՊԻ-ն ավարտած մեդիամասնագետներ: Ոլորտային հարցված գործատուների միայն 30%-ն է աշխատել ՀՖԿՍՊԻ «Լրագրություն» կրթական ծրագրի ուսանողների և/կամ շրջանավարտների հետ՝ նույն բուհում դասավանդելու կամ մասնագիտական պրակտիկայի ղեկավարման շրջանակում:

Հարց 11. Ձեր մեդիակազմակերպությունում եղե՞լ են կամ կա՞ն ՀՖԿՍՊԻ պրակտիկանտներ:


Գծապատկեր 9



Հաշվի առնելով հարցմանը ներգրավված մեծ ընտրանքը, նմանօրինակ պատկերն ակնկալելի էր: ՀՀ մեդիաաշխատողի հարցված կազմակերպությունների 36%-ը ընդունել է պրակտիկանտներ ՀՖԿՍՊԻ-ից:

11.1 Եթե այո, ապա ինչպե՞ս կզնահատեք պրակտիկանտի հմտությունները:

Գծապատկեր 10



Այս հարցին պատասխանել է հարցվածների 36%-ը (Գծապատկեր 9):

Հարցման այն մասնակիցները, որոնք ընդունել են կամ ունեն պրակտիկանտներ ՀՖԿՍՊԻ-ի «Լրագրություն» կրթական ծրագրից, գնահատելով վերջիններիս հմտությունները, ամենաբարձր գնահատականները տվել են սթրեսակայունությանը (Գերազանց՝ 29%), արագ ընկալելու (Գերազանց՝ 29%) և կողմնորոշվելու կարողություններին (Գերազանց՝ 29%) ու մասնագիտական հմտություններին (Գերազանց՝ 29%):


«Լրագրություն» կրթական ծրագրի պրակտիկանտների մասնագիտական գիտելիքներն ու արագ կողմնորոշվելու կարողությունը գործատուն բավականին բարձր է գնահատել («Լավ»՝ 43%-ի կողմից):

Համեմատաբար ցածր են գնահատվել մեդիաոլորտում պրակտիկա անցնող ուսանողների կամ անցած շրջանավարտների ՏՏ հմտությունները (Բավարար՝ 57%) և օտար լեզուների իմացությունը (Բավարար՝ 42%):

Գործատուների 14%-ն անբավարար է գնահատել ՀՖԿՍՊԻ-ի «Լրագրություն» կրթական ծրագրի պրակտիկանտների ժամանակի կառավարման ունակությունը:

Հարց 11.2 Եթե ոչ, ապա կցանկանա՞ք համագործակցել բուհի հետ այս ուղղությամբ

Գծապատկեր 11



Պոտենցիալ գործատու ներգրավելու համար ՈԱ բաժինը հարցաթերթում ներգրավել է նաև հարց այն մասին՝ արդյոք ոլորտի ներկայացուցիչները կցանկանան համագործակցել ՀՖԿՍՊԻ-ի հետ պրակտիկա ընդունելու ուղղությամբ: Այս հարցին պատասխանել է հարցված գործատուների 64%-ը (քանի որ 36%-ն արդեն իսկ համագործակիցներ են), հետաքրքրական է, որ հետագա համագործակցության մեծ պատրաստակամություն է հայտնել նրանց 40%-ը, համագործակցության որոշակի

հետաքրքրություն է ցուցաբերել հարցման մասնակիցների 33%-ը: Հարցմանը մասնակից գործատուներից որևէ մեկը չի հրաժարվել համագործակցությունից:

Համագործակցային ծրագրերի համար հիմնականում պատրաստակամ են թվային մեդիայի ներկայացուցիչները:

Հարց 12. Լրագրողական կրթության որակի բարելավման տեսանկյունից ի՞նչ առաջարկներ ունեք բուհին:

Մեդիաուլորտի գործատուի առաջարկների գերակշիռ մեծամասնությունը առաջարկել է ավելացնել պրակտիկ դասերը կամ գործնական բաղադրիչը:

- Ուսումնական գործընթացը դարձրեք ավելի պրակտիկ, որպեսզի, գալով պրակտիկայի վայր Ձեր հաստատության ուսանողները ունենան մասնագիտական հիմնարար հմտություններ:
- Կազմակերպել ավելի շատ գործնական պարապմունքներ և ընձեռել ավելի շատ ստաժավորման հնարավորություններ՝ ուսանողների տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունը զարգացնելու նպատակով:
- Մասնագիտական գիտելիքները զարգացնելու համար ցանկալի է ավելի հաճախ իրականացնել գործնական պարապմունքներ, կազմակերպել մասնագիտական պրակտիկաներ, ակտիվացնել ուսանողների կողմից բուհի պաշտոնաթերթում կամ թվային մեդիայում իրենց ռեպորտաժների, ֆոտոպատմությունների, տեսանյութերի և այլ ձևաչափով պատրաստված նյութերի հրապարակումն ու տարածումը:

Բացի գործնական բաղադրիչի ավելացումից՝ գործատուն արել է նաև հետևյալ առաջարկները.

- Շատ համագործակցեն ֆեդերացիաների հետ, հատկապես միջազգային մրցաշարերի ընթացքում:
- Կրթական ծրագրերի վերանայում, ճկուն ուսումնական պլանների մշակում, մասնագիտական հմտությունների արդիականացում, ինչպես օրինակ՝ փոքրասթի վարում, արհեստական բանականության գործիքների կիրառման հմտություններ, ուղիղ եթերում աշխատելու ունակություն, վիզուալ կոնտենտ ստեղծելու հմտություններ...
- Պետք է ավելի խիստ վերաբերել կրթության որակին:
- Թարմացնել ծրագրերն ու դասախոսական կազմը:
- Ուսումնասիրել միջազգային փորձը, ներդնել այնպիսի փոփոխություններ, որ շրջանավարտները մրցունակ լինեն ոչ թե այսօրվա, այլ արդեն վաղվա աշխատաշուկայի համար:

- Հատկացնել և ներդնել տեխնոլոգիական անհրաժեշտ ռեսուրսներ, տեսանկարահանող սարքավորումներ, մոնտաժային ծրագրեր՝ լրագրողական կրթության պրակտիկ միջավայրի ապահովման համար:
- Իրականացնել համատեղ կրթական ծրագրեր պրոֆեսիոնալ մեդիաուլորտի հետ, այդ թվում նաև՝ կարճաժամկետ ծրագրեր:

Եզրակացություններ

2023-2024 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ—ի «Լրագրություն» բակալվրի կրթական ծրագրի աշխատաշուկայի կարիքների վերլուծության արդյունքում պարզվեց, որ

- Լրագրող աշխատանքի ընդունելիս կարևորագույն հանգամանքը բարձրագույն կրթությունն է (71%):
- Գործատուն մասնագիտական կրթության առկայությունը ևս կարևորում է (53%): Վերապատրաստումներն ու դասընթացները ցանկալի են:
- Մեդիամասնագետ աշխատանքի ընդունելիս գործատուն մասնագիտական հմտություններից ամենաշատը կարևորում է մեդիագրագիտությունը, տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծումը, փորձագետների որոնումն ու հարցազրույցների պատրաստումը, ինչպես նաև խմբագրական հմտությունները:
- Ժամանակակից գործատուն մեծ ուշադրություն է դարձնում ոչ միայն մասնագիտական, այլև ընդհանրական՝ փափուկ հմտությունների վրա. այսպես՝ շատ են կարևորվում նախաձեռնողականությունը, հաղորդակցման հմտությունները, արագ կողմնորոշվելու կարողությունը և թիմում աշխատելու ունակությունը:
- Հարցման այն մասնակիցները, որոնք պրակտիկանտներ են ընդունել ՀՖԿՍՊԻ—ից՝ ամենաբարձր գնահատականն են տվել վերջիններիս սթրեսակայունությանը, արագ ընկալելու և կողմնորոշվելու կարողություններին ու մասնագիտական հմտություններին: Ամենից շատ «Բավարար» գնահատականի են արժանացել ՏՏ հմտությունները և օտար լեզուների իմացությունը: Հարցվածների 14%-ն անբավարար է գնահատել պրակտիկանտների ժամանակի կառավարման ունակությունը:
- Հարցված գործատուների մեծ մասը՝ 40%-ը պատրաստ է ընդունել ՀՖԿՍՊԻ պրակտիկանտների: Պատրաստակամ են հիմնականում թվային մեդիայի ներկայացուցիչները:
- Ժամանակակից գործատուի հիմնական պահանջը կարիքը դասընթացների կամ առարկաներում գործնական բաղադրիչի ավելացումն է:

Առաջարկներ

Հաշվի առնելով «Լրագրություն» բակալավրի կրթական ծրագրի աշխատաշուկայի կարիքների վերլուծությունը, գործատուի ներկայացրած մասնագիտական պահանջները՝ կարևոր ենք համարում առաջարկել.

- Կրթական ծրագրի ուսումնական պլանում ավելացնել գործնական առարկաներին հատկացվող ժամաքանակը, իսկ առարկաների բովանդակության մեջ ներդնել գործնական բաղադրիչը:
- Ուսանողների պրակտիկան և/կամ պրակտիկումները սկսել կազմակերպել հնարավորինս վաղ:
- Առարկայացանկում ավելացնել փափուկ հմտություններ զարգացնող առարկաներ:
- Մեծ ուշադրություն կենտրոնացնել ապագա լրագրողների թե՛ վերբալ, թե՛ ոչ վերբալ հաղորդակցության հմտություններին՝ դասավանդելով համապատասխան մոդուլներ/ թեմաներ:
- Ավելացնել և բազմազանեցնել «Լրագրություն» կրթական ծրագրի պրակտիկաների բազան, զարգացնել միջազգային համանուն կրթական ծրագրերի հետ համագործակցային հնարավորությունները:
- Գործատուի կողմից վերհանված մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով վերանայվող կրթական ծրագրում ներդնել համապատասխան դասընթացներ և/ կամ թեմաներ՝ նպաստելով ապագա շրջանավարտի մրցունակության և մասնագիտական որակավորման բարձրացմանը: